AUA American University of Armenia
TURPANJIAN SCHOOL of PUBLIC HEALTH

ENSP
European Network for Smoking and Tobacco Prevention

# «Ծխախոտային կախվածության բուժում» էլեկտրոնային դասընթաց
## Նոր հաշիվ ստեղծելու և դասընթաց մուտք գործելու հրահանգներ

ՔԱՅԼ ԱՌԱՋԻՆ

Դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է ստեղծել <u>նոր հաշիվ</u>՝ հետևելով հետևյալ հրահանգներին.

1. Անցնել հետևյալ հղմամբ http://elearning-ensp.eu/:

2. Փոխել լեզուն՝ ընտրելով Հայերեն, ինչպես ցույց է տրված ներքևում:



3. Սեղմել «Մուտք» կոճակի վրա՝ վերին աջ անկյունում:



4. Սեղմել «ՍՏԵՂԾԵԼ ՆՈՐ ՀԱՇԻՎ» կոճակը և հետևելով հրահանգներին՝ լրացնել անձնական տվյալները:



5. Հաշիվը ստեղծելուց հետո Ձեր էլեկտրոնային փոստի հասցեով կուղարկվի հաղորդագրություն՝ հաշիվը հաստատելու համար: Կարդացեք հաղորդագրությունը և հետևեք առաջարկվող հղմանը: Ձեր հաշիվը կհաստատվի և Դուք կկարողանաք մուտք գործել համակարգ:

## ՔԱՅԼ ԵՐԿՐՈՐԴ

Անձնական հաշիվ ստեղծելուց հետո «Ծխախոտային կախվածության բուժում» դասընթաց մուտք գործելու համար՝

1. Անցնել հետևյալ հղմամբ [http://elearning-ensp.eu/](http://elearning-ensp.eu/):

2. Փոխել լեզուն ՝ ընտրելով Հայերեն, ինչպես ցույց է տրված ներքևում:



3. Սեղմել E-learning courses կոճակը:



4. Դասընթացը հայերեն լեզվով անցնելու համար սեղմել Հայաստանի դրոշի վրա։



AUA American University of Armenia

TURPANJIAN SCHOOL of PUBLIC HEALTH

ENSP European Network for Smoking and Tobacco Prevention

5. Սեղմել «Մուտք» կոճակը, որը գտնվում է վերին աջ անկյունում:



6. Մուտքագրել Ձեր անձնական <u>Մուտքանունը</u> և <u>Գաղտնաբառը</u> և սեղմել <u>«Մուտք»</u> կոճակի վրա:



American University of Armenia
TURPANJIAN SCHOOL of PUBLIC HEALTH

ENSP
European Network for Smoking and Tobacco Prevention

7. Ծանոթացեք ներածական տեսանյութին, այնուհետև սեղմեք «ՍԿԻԶԲ» կոճակի վրա՝ դասընթաց մուտք գործելու համար:

Ծխախոտի դեմ պայքարի ոլորտը վերջին տարիներին զգալի առաջընթաց է ապրել, և այժմ գոյություն ունեն ապացույցների վրա հիմնված ծխախոտային կախվածության բուժման մեթոդներ, որոնք կարող են զգալիորեն բարձրացնել ծխելը դադարեցնելու հավանականությունը: Ծխելը հաջողությամբ դադարեցնելու հիմքում ընկած է պացիենտների կրթման, վարքաբանական աջակցության և ծխելը դադարեցնելու հասանելի դեղորայքային միջոցների ճիշտ կիրառման համակցումը: Կարևոր է, որ առողջապահության ոլորտի բոլոր մասնագետները ծանոթ լինեն ծխելը դադարեցնող հիվանդներին աջակցելու նորագույն տեխնիկաներին և վստահորեն օգտագործեն այս ապացույցների վրա հիմնված բուժումները:

Առողջապահության ոլորտի մասնագետների համար նախատեսված այս օնլայն ուսուցման ծրագիրն ընդգրկում է ծխախոտային կախվածության բուժման բոլոր բաղադրիչները և

հիմնված է ԾԿԵՑ-ի «Ծխախոտային կախվածության բուժման ուղեցույց»-ի վրա:

Համագործակցելով ԾԿԵՑ-ի հետ՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետը մշակել է այս դասընթացի հայերեն տարբերակը: Մենք վստահ ենք, որ ծխախոտային կախվածության բուժման վերաբերյալ այս դասընթացը կօգնի զինել առողջապահական մասնագետներին այս մահացու կախվածությունը հաղթահարելու համար անհրաժեշտ հմտություններով և հիմք կծառայի Հայաստանում ծխախոտային կախվածության համապարփակ և ամբողջական բուժման կարողությունների զարգացմանը:

American University of Armenia
TURPANJIAN SCHOOL of PUBLIC HEALTH



ՍԿԻԶԲ